Social Security

Ապահովության Լրացուցիչ Եկամուտի Նպաստներ

Ի՞նչ է SSI-ը

SSI հապավումը նշանակում է Ապահովության Լրացուցիչ Եկամուտ։ Դա մի ծրագիր է, որ գործադրվում է Հասարակական Ապահովության (Social Security)-ի կողմից։ SSI-ը ամսական նպաստներ է տրամադրում ծեր, կոյր և անկարող մարդկանց, որոնք ունեն չնչին ունեցվածք և եկամուտ, կամ բոլորովին չունեն։ Չափահասների նման, երեխաներն էլ կարող են նպաստներ ստանալ կուրության կամ անկարության համար։ SSI ստանալու համար պետք է լինեք ծեր, կոյր կամ անկար.-

- Ծեր նշանակում է 65 տարեկան և բարձր։
- Կոյր նշանակում է ամբողջական կուրություն կամ շատ տկար տեսողությունն։
- Անկար նշանակում է մարմնային կամ հոգեկան հիվանդություն, որը կտևի առնվազն մի տարի կամ կպատճառի մահ։ Ձեր տեղական հասարակական Ապահովության Գրասենեյակը կարող է ձեզ լրացուցիչ տեղեկություններ տալ չափահասների և երեխաների անկարողության կանոնների մասին։

Եթէ ստանում եք SSI, հնարավոր է ստանալ նաև սննդատոմսեր (food stamps) և Medicaid։ Medicaid-ը ձեզ օգնում է վճարելու բժշկի և հիվանդանոցի ծախսերը։ ստացագրերը։

Ձեր Ունեցվածքը Եւ Ձեր Եկամուտը

SSI ստանալու համար ձեր ունեցվացքը և եկամուտը որոշ սահմանից ցածր պետք է լինի։

Ձեր Ունեցվածքը

Ամեն ինչ չէ, որ մենք հաշվի ենք առնում որոշելու համար, թե դուք կարող եք SSI ստանալ։ Օրինակ, մենք չենք հաշվում ձեր ապրած տունը և որոշ անձնական առարկաներ։ Սովորաբար, մենք չենք հաշվում ձեր մեկ ինքնաշարժը։

Մենք հաշւում ենք.-

- Կանխիկ դրամ,
- Դրամատան հաշիվները արժեթղթերը(stocks), Ա.Մ. ական Մուրհակները(U.S. Savings Bonds),
- Անշարժ Գոյք,
- Կյանքի Ապահովագրություն, և
- Անձնական Կալվածքներ։

Դուք կարող եք SSI ստանալ, եթե մեր հաշված ունեկվածքի արժեքը չանցնի.-

- $2.000 մեկ անձի համար, և
- $3.000 կոյգի համար։

Ձեր Եկամուտը

Եկամուտը այն դրամն է, որ դուք ստանում եք որպես.-

- աշխատավարձ (աշխատանքային կամ անձնական գործի եկամուտ)։
- Հասարակական Ապահովության չեքեր։
- Հանգստաթոշակ։
- Աշխատավորի աշխատանքային հատուցման վճարումներ։
- Տոկոսներից, շահույթներ, շահաբաժնի վճարումներ։
- Անգործության հատուցումներ։
- Նվերներ (օրինակ, կանխիկ դրամ)։

Եկամուտ է համարվում նաև ոչ դրամային ստացումներ, ինչպիսիք են ուտեստեղեն, հագուստեղեն և պատսպարան։ Մի ուրիշ եկամուտ կարող եք ունենալ և SSI։

Այլ Կանոններ, Որ Պետք է Իմանաք

Մինչդեռ SSI ստանալը, դուք պետք է.-

- Ապրեք Միացեալ Նահանգներում կամ Հյուսային Մարիանա Կղզիներում։
- Լինեք Ա.Մ.Ն.-ի քաղաքացի կամ հպատակ, կամ
- Լինեք ոչ քաղաքացի խմբավորումների իրավասու մեկը։

Կապնվեք Հասարակական Ապահովության ձերգ րասենյակի հետ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար ոչ քաղաքացիների իրավասության կանոնների վերաբերյալ։ Պահանջեցեք <<SSI –ը ոչ քաղաքացիների համար>> պարբերաթերթիկը։ (համար 05-11051 հրատարակությունը)

Ի՞նչպես կարող եք դիմել SSI -ի համար

Այցելեք ձեր Հասարակական Ապահովության գրասենյակը, կամ հեռաձայնեք **1-800-772-1213** անվճար հեռախոսահամարով, ժամադրություն նշանակելու համար ձեր Հասարակական Ապահովության ներկայացուցիչի հետ, որը ձեզ կ՚օգնի դիմումի համար։

Ծնողները կամ խնամակալները կարող են դիմել 18 տարեկանից ցածր կույր կամ անկարող երեխաների համար։

Եթէ թարգմանիչի կարիք ունեք, մենք կարող ենք անվճար տրամադրել թարգմանիչ։ Նախ հեռաձայնեք ժամադրության համար, որ ձեր լեզվով խոսող մեկը ներկա լինի ձեզ օգնելու համար։

Ի՞նչ Պետք Է Բերեք

Դուք պետք է ունենաք հետևյալ թղթերը դիմելու համար: Եթե նույնիսկ ցուցակում նշված բոլոր թղթերը չունենաք, ստորագրեք դիմումը: Հասարարական Ապահովության գրասենեակի պաշտոնյաները կարող են օգնել ձեզ ձեռք բերելու ինչ որ անհրաժեշտ է։ Խնդրվում է բերել՝.–

- Ձեր Հասարական Ապահովության քարտը (Social Security Card) կամ Հասարական Ապահովության համար:
- Ձեր ծննդյան վկայականը կամ տարիքը հաստատող այլ փաստաթուղթ։
- Տվյալներ ձեր ապրած տան մասին,ինչպես օրինակ գրավաթուղթը (mortgage), կամ վարձի պայմանագիրը և տանտիրոջ անունը։
- Տուրքերի հետադարձ թղթերը կամ W-2 form, աշխատավարձի կտրոնը (pay stubs), դրամատան գրքույկները (bank books), ապահովագրության, ինքնաշարժի, թաղման հիմնադրամի արձանագրությունները և այլ տվյալներ ձեր ունեցվածքի և եկամուտի վերաբերյալ։
- Եթէ դիմում եք անկարողության համար, բերեք ձեր բժշկների, հիվանդանոցների և բուժարանների անունները, հասցեները և հեռաձայնի համարները։
- Ա.Մ.Ն.–ի քաղաքացիության կամ իրավասու ոչ քաղաքացի լինելու փաստ։

Պետք է բերեք նաև ձեր չեքերի գրքույկը կամ որևէ այլ թուղթ որոնք ցույց են տալիս դրամատան, վարկային միության կամ դրամական հաստատության համարը, որպեսվի մենք կարողանաք ձեր նպաստները ուղղակի ներդրել ձեր հաշվի մեջ։ Ուղղակի ներդրում պահպանում է ձեր նպաստը կորելուց, գողությունից կամ փոստայի ուշացումից Դրամը միշտ ժամանակին է հասնում և պատրաստ է լինում օգտագործելու առանց դրամատուն գնալու։ Դրամատանը հաշիվ չունեցող անձինք միայն ստանում են չեքեր։

միշտ ժամանակին է հասնում և պատրաստ է լինում օգտագործելու առանց դրամատուն գնալու։ Դրամատունը երթալու ուղևորութեան։ Դրամատան մէջ հաշիվ չունեցող անձինք միայն ստանում են չեքեր։

Մի խոսք Հասարական Ապահովության նպաստների Մասին

Հասարական Ապահովությունը նաև վճարում է կենսաթոշակներ, վերապրողների նպաստներ և անկարողության նպաստներ նրանց, որոնք բավական երկար աշխատել են Հասարական Ապահովության համակարգին պատկանող աշխատատեղերում։ Լրացուցիչ տեղեկությունների համար պահանջեցեք տեղեկութիւններ ***«Կենսաթոշակ, Վերապրողների Նպաստներ կամ Անկարողության Նպաստներ»***։

Հավելյալ Տեղեկությունների Համար

Այցելեք ***www.ssa.gov*** website–ը, ձեր հարցերի պատասխաններին ունենալու և Հասարական Ապահովության այլ ծառայություններից օգտվելու համար։ Կարող եք պատվիրել **հրատարակություններ** և **դիմումնագրեր,** օգտվելու **հանգստյան անցնելու** և այլ **նպաստների նախատեսման ծրագրերից (Retirement and Benefit Planners),** գրանցվել ստանալու ***eNews***, **մեր էլեկտրոնային պարբերաթերթը** և մինչև անգամ **կենսաթոշակի դիմել ինտերնետով**։ Ինտտերնետով մեր սպասարկությունների մեծ մասը միայն անգլերենով է։ Դուք կարող եք մեկ հեռաձայնել **1-800-772-1213**։ Անվճար համարով։ Մենք կարող ենք ձեր հարցերին պատասխանել, առ. ժամը 7–ից մինչև երեկ. ժամը 7–ը աշխատանքային օրերի ընթացքում։ Ընդհանուր հարցերի ցանկագրված պատասխանները կարող եք ստանալ օրական 24 ժամ։ Եթե խուլ եք կամ լսելու դժվարություն ունեք, կարող եք հեռաձայնել մեր TTY համարով՝ 1-800-325-0778 առ. ժամը 7–ից մինչև երեկ. ժամը 7–ը աշխատանքային օրերին։

Մեր Բոլոր հեռախոսային խոսակցությունները գաղտնի (անձնական) են, լինեն դրանք մեր անվճար համարով կամ գրասենյակների հետ։ Եվ մենք ուզում ենք, որ դուք ստանաք ստույգ և քաղաքավարի սպասարկություն։ Ահա թե ինչու մեր մի այլ ներկայացուցիչ հետևում է որոշ հեռաձայնային խոսակցություններին։

Social Security Administration
Supplemental Security Income Benefits (Armenian)
SSA Publication No. 05-10722
January 2002